

Թեան զանազան տեսակետներէ (երգեր — ցանկալի է ձայնագրած — հէքեմէներ, առասպելներ, հանելուկներ, գաւառական բառեր), նոյն բովանդակութեամբ հին հայ գրաւորներ, կամ նոցանոց թարգման յիշատակարաններ, ժողովրդական կեանքին վերաբերեալ վիճակագրական տեղեկութիւններ, աղիւստներ, պատկերներ, լուսանկարներ, քարտէշներ», եւն եւն: Դիւնլէ՝ Rédaction de la „Collection Ethnographique d'Emin“, Institut Lazareff des Langues Orientales, à Moscou (Russie).



ՔԱՂԱՔԱՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

Վնննա, 27 Փետրուար 1899:

Քաղաքական արհաւիրքն այս ամսուն մէջ անսովոր սաստկութեամբ մը դղորեց քաղաքական աշխարհը: Արդեօք ծմբուումն ազդեցութեամբն է, որ այնչափ սաստկութեամբ ճարակեցաւ, ոմանց բնական այլոց գեղբնական (!) մահ բերելով. չենք գիտեր: Յուսանք թէ տարւոյս մէջ նմանն այլ եւս չենք տեսներ, թէ եւ Madame de Thèbes Գաղղիոյ աստեղամայ մարգարէն տարւոյս մանուսանդ վերջին ամիսներուն համար ահաւոր եւ դղորեցուցիչ պատահարաց զուշակութիւններ կ'ընէ:

Անգղիա: Գաղղիոյ ներքին խռովութեանց եւ երկպառակութեանց շնորհիւ շատ տկարած ինքնապաշտպանութեան ծանօթութենէն օգուտ քաղելով՝ գաղղիական շահուց ակնածութիւն ունենալու հարկը չի նշմարեր: Անցեալ տարւոյ վերջերն էր յաջողած էր Գաղղիացիքն Փաշոպայէ ճամբայ հանելու, հիմայ ալ նոյն կերպով խափանած է Գաղղիոյ եւ Օմանի Մուլթանին մէջ դրուած դաշնադրութիւնն, որով Գաղղիոյ կը տրուէր Մազկատ ծովագերեայ քաղաքն իբր ածխոյ նաւահանգիստ: Անգղիական նաւատորմին հրամանատարը սպառնացած էր որ եթէ մինչեւ կէսօրւան 3րդ ժամը Մուլթանը իր նաւատորմին չի գար եւ դաշնագիրն յանձնէր՝ քաղաքը կը ուժեղանէր. այս սպառնալիքն որ կատարուելով շատ հեռու էր, ազդեց. դաշնագիրը ընձուեցաւ եւ Գաղղիա կրնայ այժմ իր սակարկութեամբն յարուցած աւելորդ քաղաքական խռովութեանց պտղովն զուար-

ճանալ: Անգղիա միւս կողմանէն ալ անգործ չի կենար. զինուորաց թիւն իբր 17.000 նորընտիրներով կ'անցնէ, անծուխ վառօղ կը հոգայ եւ քանի մը միլիոն փամփուշտ կը պատրաստէ:

Առաստիւհա-Հռոմագրիա: Դնչպէս գուշակած էինք վերջին թուին մէջ նոր քաղաք Ռորթրաքանն երկար չապրեցաւ, եւ թուն երկաթեայ ձեռքօք առանց շատ ակնածութեան փակեց նոյնը: Գաւառական ժողովներն իրենց գործունէութիւնն սկսան, եւ ուր որ Գերմանացիք մեծամասնութիւնը կը կազմեն՝ ընդդէմ § 14ի բողոքել չեն ուզեր հրաժարիլ: Մարիա Իմմա-կուլտատ արքիդքսուոյն ման քաղաքականութեան նկատմամբ ազդեցութիւն մը չունեցաւ: Անոր հակառակ Հունգարիա, ուր որ կառավարութեան հակառակ կուսակցութիւնը չնչին փոքրամասնութիւն ըլլալով հանդերձ որ եւ է գործունէութիւն ի դերու հանած էր Բանֆի եւ իւր պաշտօնարանը ստիպուեցան խոնարհիլ եւ քաշակցութիւնը արդիւնք մը տալ չկարենալով ի վերջոյ հրաժարիլ: Փրանկ. Յովսէփ կայսրն Կոլուման Սէլի յանձնեց նոր պաշտօնարանին կազմակերպութիւնը, որ քաշակցութիւններով երկու կողմն իրարու հետ միացնելէն ետեւ յաջողեցաւ: Նոր պաշտօնարանին մէջ հին պաշտօնեաներէն երեք հոգի կը պակսին, յորս կը գտնուի եւ Պարոն Դանիէլ հայազգին՝ առեւտրոյ պաշտօնեայն: Անոր հակառակ կը շարունակեն մնալ վեց հին պաշտօնեայք՝ յորս է եւ Լուքաչ հայազգին՝ ելմտից պաշտօնեայն որ այս առթիւ՝ Լէոպոլդոսի կարգին մեծ խաչն ընդունեցաւ:

Բոլշագրիա ալ պաշտօնարանի տագնապ մ'անվատ անցուց, թէ եւ խռովութեանց վայն կար: Ստիլով եւ իւր պաշտօնարանն ինկաւ: Փերդինանդ իշխանը պաշտօնարանի նոր կազմակերպութիւնն յանձնեց Գրեկովի, որ յաջողութիւն ունեցաւ ընտրելով ամէն բանէ յառաջ գիտաբոլսլաւով ներքին գործոց պաշտօնեայ: — Բուլգարիա՝ մինչ նորածին փոքրիկ իշխանուհոյ մը ծննդեան առթիւ ցնծութեանց մէջ էր եւ հանդիսութեանց յաճախութեամբ ալ իւր ուրախութիւնը կը յայտնէր առաւ վշտալի եւ ըլլոր հաւատարմի՝ հպատակաց սիրտը խոր սգով պատող այն

բօթը՝ որ կը ծանուցանէր Մարի Լուիզ իշխանուհոյն մարք։ Իշխանուհին տղայաբերութեան տկարութեանց մէջ՝ ընտուած ըլլալով արդէն ինֆրուսկնցայն ունեցաւ սուր թորատապ մը՝ որ քանի մը ժամու մէջ երիտասարդ կննայ թեղի կտրեց։ Իշխանուհին հազիւ 29 տարւան էր եւ իւր բարձրապ. ամուսնոյն պարգեւած էր չորս զաւակ, երկու մանչ երկու աղջիկ՝ որոնց նորածինը կոչուեցաւ Մադեգրա։ Հանգուցեալն իւր զթափրութեամբն եւ բարեգործութիւններովը շատ սիրուած էր ժողովրդոնէն՝ որ հաւատարիմ տիրապիրութեամբ մասնակցեցաւ իւր իշխանին վշտահար սրտին խոր սգոյն։ Իշխանուհին թաղուեցաւ առժամանակեայ կերպով Փիլիպպոլիս։

Գաղղիա։ Ոգըզ գրգռութիւնը վերջին աստիճանին հասած միջոցին ընդունեցաւ Գաղղիա այն հարուածը որ պահ մը մեծամեծ կասկածանաց եւ երկիւղի պատճառ տուաւ։ Գաղղիոյ հասարակապետութեան Գահերէցը Փօր՝ ըղեղի կաթուածով մը՝ քանի մը ժամու մէջ թողոց Գաղղիան որը, անտերունչ։ Ամսոյս 16ին էր Ուրբաթ օրն՝ կէսօրէն ետքը՝ Շանգ Էլիզէ իւր առօրեայ պաշտօնական գործոց պարտապաժ միջոցին ժամը 3ին մօտ ինք զինքը գէշ վիճակի մէջ կը զգայ, բժշկաց հարմանք ապարդիւն կը մնան, թէ եւ ասոնց առաջին հայեցումսն կը ճանչնան հիւանդութիւնը։ Իրիկուան ժամը 10ին արդէն վախճանած էր։ Փօր՝ ներկայացընելու արուեստը՝ կ'ըստի աղէկ գիտէր եւ Գաղղիոյ պատիւ բերաւ, ստար տէրութեանց առջևը ցուցած ծանրութեամբը։ Փօրի ամենամեծ եւ Գաղղիոյ համար արդիւնաւոր գործն եղաւ Ռուս-գաղղիական դաշնակցութիւնն որ զինքը ժողովրդեան մէջ պիտի ամսմահացնէ։ Փօր գիտցաւ ինք զինքը խոսկալոյց ժամանակին բողաքական ինդիկներէն վեր ըննել եւ իւր ճիշդութիւնը պահել։ Հանգուցեալն ինք զինք իւր անուշ եւ ընկերական ընտելեամբը սիրցընել գիտցած էր եւ իրաւ անով էր որ հասարակ խաղախորդի գործատէրութենէ՝ հասցուց մինչեւ հասարակապետութեան զահերիցութիւնը։ Փօր ազատ-որմաշէն էր եւ 1895 էն ի վեր վեցերորդ Գահերէց երրորդ Հասարակապետութեան։ Թաղուեցաւ ներկայութեամբ մեծ պետութեանց պատգամաւորաց Պա-

րիսի Notre-Dame եկեղեցւոյն մէջ հանդիսութիւնները կատարելէն ետքը՝ Պէն-Լաշէզ գերեզմանատունը։

— Գաղղիոյ անտերունչ վիճակը երկար չտեսց։ Մախարաբապետ Դիւալիի եւ ծեղակուտի զահերէց Լուբէ՝ երկրորդ օրն իսկ համաժողովն (congres) հաւաքեցին, որ շուրջ 150 ծայնի առաւելութեամբ ընտրեց զԼուբէ՝ զահերէց Հասարակապետութեան, Դիւալիի եւ Մէլին թիկնածութիւնէն հրժարած ըլլալով։ Լուբէ՝ ժողովրդեան մեծամասնութեան վստահութիւնն եւ համակրանքը չունի, եւ իբրց ալ անկողմական մարդ չ'երեւար, առաջին panomistեն էր ժամանակեայ, եւ ինքն էր որ իւր նախարարապետութեան ատենը Պանմայի համբաւաւոր խնդիրն ծածկել ջանաց եւ Արտոն Հրէուն ձեռնակալութիւնն արգելք դրաւ։ Հիմայ ալ Լուբէ՝ Դրէֆուսեանց կողմակից եթէ չէ՝ անոնց շատ համամիտ է, զոր կ'ապացուցանէ եւ այն պարագայն՝ որ Դրէֆուսեանց լիաձայն զինք ընտրեցին։ Լուբէի ընտրութիւնը ժողովրդեան մէջ ի կողմն եւ ընդդէմ շատ ցոյցեր պատճառեց։ Ի մասնաւոր ազգափրաց միութիւնն, որ իւր հակակառավարական ուղղութեան պատճառաւ զրկուած էր Փօրի թաղման ներկայ գտնուելէ՝ ցոյցերու մասնակցեցաւ։ Սակայն Դէրուլէդ՝ միութեան զահերէցն՝ անխորհրդածեալ գործով մը՝ թէ միութիւնն եւ թէ հակադրեականները վտանգի մէջ ձգեց, այնու իբր թէ կառավարութեան ղէմ դաւ մը նիւթած ըլլայ, որ անսպառ խուզարկութեանց պատճառ տուաւ։ Դէրուլէդ եւ իւր բարեկամն Հաբէր՝ թէ եւ պատգամաւոր բանտարկուած են այժմ։

— Դրէֆուսի դատաստանին վերաբնութեան մասին Կէնէ դր Բորպպոի յայտարարութիւնը եւ ամբաստանութիւնը սպասուած պտուղը տուին թէ եւ Մագօ վճռաբեկ ատենին դատարաններուն լիուլի անկողմնակալութիւնն ու պատուաւորութիւնը ցոյցընել կը ջանայ։ Դիւալիի՝ այս նկատմամբ ոգինքն հանդարտեցընելու համար իմաստուն օրէնք մ'առաջարկեց՝ որով այսուհետեւ վերաբնութեան խնդիրները վճռաբեկ ատենին միացեալ սենեակներուն պիտի յանձնուին եւ ոչ թէ միայն պատժապարտ մասին։ ասով Դրէֆուսի վերաբնութեան դատը՝ կրնանք ըսել թէ

այսմու առնելին ծեղրէն առնուած կ'ըլլայ: Խորհրդարանին մէջ մեծ առաւելութեամբ քուէից ընդունուեցաւ օրէնքն թէ եւ վճարեակ տանելին տեղեկատուն (référént) ամէն միջոց ընդդէմ գործածեց: Այժմ կը մնայ որ ծնարկոյտն ալ ընդունի օրէնքը, ուր քիչ շատ արգելքներ պիտի հանդիպին կ'երեւայ:

Գերմանիան ալ թաղեց իւր վաղեմի պետական դիւանապետը գլխաւորի: Կապիւրի Բիզմարկի անմիջական յաջորդն եղաւ, անոր այնպէս անյուսակից անկմանէն ետքը: — Ընդհանրապէս Գերմանիոյ մէջ հոսանք մը կը նշմարուի՝ Գաղղիոյ կերպով մը աւելի մեղմանալու եւ հետը քաղաքական հասկացողութիւն մը հաստատելու: Վերջին օրերս՝ հոկտեմբերի այժմու Գիւանապետին նրաժարականին վրայ շատ խօսուեցաւ, սակայն կ'երեւայ թէ անշիմն խօսքեր են ամբողջ, նոյն իսկ յաջորդը որոշուած է եղբոր՝ իշխան Ռաժիւի:

Ռուսիոյ ոչ միայն իւր սերերիական երկաթուղին ամենայն հապճեպով կ'փութայ աւարտել այլ նաեւ մենաստանի մէջ նոր սկսածին վրայ մեծ փոյթ կը ցուցնէ, որուն համար անդադար Բոսփորի ափանց առնելէն նաեւր կ'անցնին ատարձով եւ հազարաւոր գործաւորներով՝ մենաստան անցնելու համար: Ռուսաստան թալիէն-վան տուրք հանգանակած միջոցին տեղացւոց մէջ խռովութիւն ծագեցաւ, եւ մենաստանի այրի կայսրուին եւ կառավարութիւնն իսկ բողոքեց՝ իբր թէ Ռուսիա ըստ դաշանց տուրք առնելու իրաւունք չունի:

Օսմանեան Պետութիւն: Մակեդոնիա՝ ուր ոգիներն երթալով կը գրգռուին՝ խռովութեանց առաջն առնելու համար եւ յամենայն դէպս պատրաստ գտնուելու համար՝ Տանկաստան գլխաւորաբար Բալկանեան պետութեանց սահմաններուն վրայ մեծագումար բանակներ կը զետեղէ, եւ անընդհատ ռազմամթերք կը խալէ: Իպէթի առնաւորտեցողոր մէջերնին միջաբանած են Պետութեան պատերազմի կոչին վրայ քանի մ'օրուան մէջ քանի մը հարիւր հազար զինուոր եւ պաշիպոզուկ ճամբայ հանելու: Սակայն կը յուսանք որ խաղաղութիւնն չի վրդովուիր. մանաւանդ որ Ռուսաստան ալ ծեղրէն եկածը կ'ընէ՝ Մակեդոնեան հանդարտեցնելու համար:

Միացեալ Նահանգք եւ Սպանիա: Նրկու ոսոխ պետութեանց մէջ հաստատուած խաղաղութեան դաշնադրութիւնն՝ վերջերս խորհրդարանէն հաստատուելու համար՝ դրուեցաւ պատգամաւորաց առջեւ: Կոմս Ալմէնա իւր՝ բանակին եւ զօրավարաց վրայ յարձակումները կը շարունակէ, որոնք բնականաբար կառավարութենէ եւ բանակին կողմակիցներէն կը հերքուին: Այս բաւական չէ՝ Սպանիա սկսած է նոյն իսկ իւր ամէնէն նշանաւոր զօրավարները հալածել՝ իբր թէ իրենք եղած ըլլան կրած ահաւոր թշուառութեան պատճառը, այսպէս Տորալ, Սերվերա եւ այլք՝ պատերազմական դատաստանարանին առջեւը պիտի հանուին: Անդիէն Ամիրիկացիք շատ երկար սպասելու են մինչեւ որ իրենց այսպէս շուտով են անջան վատրկած յաղթութեան պտուղները վայելելու սկսին: Փիլիպպեան կղզեաց վրայ ապստամբք՝ Ամիրիկացւոց դէմ զենք վերցուցած են. եւ զանոնք որ յառաջ իրենց փրկիչներն հռչակած էին՝ իրաւ իրենց ոխերիմ՝ թշնամի կը համարին:



ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒՄ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՊՏՏՄԱԿԱՆ — Պարսկաստանի Հայերը, Ներսէս անցաւ, Ներկան եւ ապագան. 65: — Շոխաբեթուպոյսեցիք՝ կ'զուր քանի մը ծանրաբեռնութիւններէ ազատելու կը շնան. 69:

ԳՐԱԿԱՆ — Խիկար եւ իւր իմաստութիւնն. 74: ԳՆՆՆԱԳՐԱԿԱՆ — Բոլիշէ ծոթ. Եակոբ Պէյ Թով հանուեցան. 80:

ԼԵՂՈՒՍԱՐԱՆԱԿԱՆ — Գրիշիկի Ժազման խնդրը. 83: ԵՆԵԼԵՆԵԼԻՔ

ՆՈՐ ՎՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. 84:

ԱՅԳԱՅՈՒ ԹԵՐԵԹԵՐ ԺԱՂՉՓՈԽԱՅ — 1. Բարձր շքանշաններով պատուուած ազգայինը: — 2. Բարձրադրութիւնը: — 3. Բանասէր — նոր պարբերաբար մը: — 4. Գաւկ մը Փրիդրիկ Միւլլերի գերեզմանին վրայ. — 5. Տեղեկագիր Ազգ. Հիւանդանոցի Զինուորի: — 6. Լազարեան մեմորաւն Արեւելեան Լեզուաց. 91:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՍՈՒԹԻՒՆ 94:



ՎՐԱՏԱՐԱԿԱՆ ԺՈՒ ՊՏՏՄԱԿԱՆԱՅՈՒ ԽՄԱՐԱՐ

Դ. ՌԱՓԱԵԼ Կ. ՊԱՐՈՆՅ

ՎԻՆԵՆԱ, ՄԻԻԲԵՐԵՆԱ ՑԱՐԱՆ